

ՕԴԵՍԱՅԻ ՄԱՐԶ

Վիմագրական արշավախումբն Օդեսայի մարդուժ ուսումնասիրել է Օդեսա, Իզմայիլ, Կիլիա և Բելգորոդ-Դնեսարովսկի քաղաքների հայկական պաամական հուշարձաններն ու նրանց արձանագրությունները:

ՕԴԵՍԱ ՔԱՂԱՔ

Օդեսայում հայկական հուշարձաններ, բացի գերեզմանոցից, այժմ չեն պահպանվել: Մ. Բժշկյանի շրջագայության ժամանակ XIX դարի սկզբներին Օդեսայում ապրում էին 30 ընտանիք հայեր, որոնք եկած են եղել Գրիգորիոպոլից և չեն ունեցել եկեղեցի²⁴⁶: Նոր եկեղեցին՝ Գրիգոր Լուսավորչի անվամբ, կառուցված է եղել ավելի ուշ շրջանում²⁴⁷, այժմյան Խորհրդային փողոցի վրա՝ քաղաքի N 18 միջնակարգ դպրոցի աեղում: Հայրենական պատերազմի ժամանակ ունեցվել է և ամրոցը ղեկավարել: Կանգուն ժամանակ ունեցել է հեռավար արձանագրությունները, որոնք այս պրակում դեպքում ենք Լ. Մելիքսեթ-Բեկի վերծանությունը²⁴⁸:

601. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան մուտքին՝ ներքուստ:

Օդեսայի քաղաքում Աստուծոյ կառուցուլ զանգակատունս Օսիսայի Ս. Լուսավորիչ եկեղեցւոյս Հայոց արդեամբք գերազնիւ Հայազն մայեօր Թօմայի Նացւալովեանցի²⁴⁹, յամին աեառն 1884 եւ յազգական 1333:

Հրատ. Меликсет-Бекоев, Из материалов, էջ 15-16.

602. Տալանաքար, գտնվելիս է եղել եկեղեցու հարավարևմտյան մուտքի մոտ: Հայաանրերվել է շինարարական աշխատանքների ժամանակ:

Այս է տալան Տալազոնցի խաղաղի...

Ծանոթ. Տարազոնցի պեաք է կարգալ Տրապիզոնցի:

Հրատ. Меликсет-Бекоев, Из материалов, 16.

603. Խերսոնի նահանգի Օչակով (նախկին Կարա-Քերման) քաղաքի տարածքից հայաանրերված արձանագրությունը, որ Մելիքսեթ-Բեկին արամագրել է Օդեսայի հայոց եկեղեցու քահանա Հովհաննես Չուրարյանը 1913թ.:

Որ վասն անչափ սիրոյ քոյին

Բանգիկ (°) եւ արին առեր մարմին՝

Աղաջանօք Աստվածածնին.

Թող զանցանս մահաեսի Տէր-Պապայի

246 Տե՛ս Մ. Բժշկյան, էջ 218:

247 XIX դարիի երկրորդ կեսին Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից Հովհաննես քահանա լուսնել է տալիս դպրոց: Տե՛ս «Արարատ», 1868, հոյեմբեր, N 7, էջ 100:

248 Ս. М. Меликсет-Бекоев, Из материалов для истории армян на юге России, 2-е изд, Тифлис, 1914, с. 15-16.

249 Թ. Նացվալովյանի մասին տե՛ս «Արձագանք» 1884, N 31, էջ 544: Նույն տեղում՝ Օդեսայի քահանա Խորասանյանի մասին: 1884 թ. «Ընամապարհորդ» ստորագրությամբ հռչակածագիրը նշում է, որ Օդեսայի հնությունների թանգարանում տեսել է հայերեն 4 եղծված արձանագրություն, որ կարդացել է «Փառսկեցի Ոսկանանց Սահակի» և դուստրերի մասին: Մեկի թվականն է ՌԺՂԲ (1743):

Դսաերն՝ Մարիամ Պիքէին,
Որ էր կողակից Յովանիսին,
Որ Հանգեաւ Թիւ ՌՃԾԵ (1706)-ին:

Հրատ. Меликсет-Беков, Из материалов, 17

604. Օղեսայի պատմութեան և Հնությունների Թանգարանում եղել են²⁵⁰ եղծված երեք արձանագրություններ, որոնցից Քուչուկ-Հավհանիսյանը մեջբերում է միայն հետևյալը.

Յիշատակ է աղբիւրս Փառակեցի Ոսկանանց Սահակի որդի պարոն Թեւանի աղային եւ որդոցն՝ Գէորգին եւ դստերացն արեւուն, Համայն ընտանեաց կենդանեացն եւ ննջեցելոցն հոգուն շինեցաւ թմ. ՌՃՂԲ (1743)-ին:

Հրատ. Кучук-Иоаннесов, 31; Ա. Թորամանյան, 25:

ՕԴԵՍԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵՋՄԱՆՈՑ

Գտնվում է քաղաքի Հարավարևմտյան կողմում, Լեհական գերեզմանոցի մոտ: Տապանագրերը նոր են, ամենահինը թվագրված է 1897-ով: Հին գերեզմանոցը, որ, հավանաբար, եղել է եկեղեցու շուրջը, այժմ չի պահպանվել: Նշանակահարմար գտանք ընդօրինակել հետևյալ կոթողների վիմագրերը.

605. Տապանաքար, կրաքարից. վրան փորագրված է 5 տող.

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՇԱՐՈՒՐ/ ԳԱՍՊԱՐԻ ԱՂՋԻԿ/ ԱՎԵՏԻՍԻ ԸՆՏԱՆԻԿ/ ՊԼՊՈՒԼԻ ՔՈՒՅ-ՐԸ/ 1872-1937:

606. Մահադձան-կոթող՝ տապանաքարով, որի վրա՝ 3 տող.

ԳԱԼՈՒՍՏՅԱՆ/ ՄԱՆՈՒԿ/ 1886-1928:

607. Տապանաքար, սպիտակավուն կրաքարից: Վրան՝ 8 տող.

Здесь /покоится прахъ/ Саркиса Дзєроповича/ Касапова/род. 1февраля 1846./Умеръ 7 февраля 1894./Миръ праху твоему/ незабвенный мужъ.

608. Մահադձան-կոթող. վրան աղուցված մարմարակերտ սալին՝ 6 տող.

Здесь покоится прахъ/ Мардиросъ/ Поповъ./ Ск.1911г./Миръ праху твоему/, дорогой мужъ.

609. Տապանաքար, սպիտակ մարմարից, նախկին տեղն անհայտ: Խաչանշանի տակ փորագրված է 5 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ/ ՍՏԵՓԱՆՆՈՒ ՍԱՀԱԿԵԱՆ ՓԱՆՈՍԵԱՆՑԻ,/ ՊԱՐՍԿԱՀԱՅ. ԾՆ. 1902թ. ԱՊՐԻԼԻ 2, Ի ԹԻՖԼԻՍ/ՎԱԽՃ. 1919թ. ԴԵԿՏ./ 15 ՕԴԵՍՍԱ:

610. Կոթող, սև մարմարից, թևավոր խաչը գլխին. միջնամասում գրված է հայերեն 2 և ռուսերեն 5 տող.

250 1967 թ. խմբարշավի ժամանակ հանգամանորեն ստուգեցվեցին Օղեսայի հնագիտական թանգարանի ֆոնդերը, որտեղ հայտնաբերվեց մեզ հետաքրքրող քարտը՝ N 50362 Ֆոնդառամարով, որում գրանցված էր. «Фрагмент плиты с армянской надписью с изображением креста, мрамор, 42x32, 1894. Дар Берты Деллегорда». Իսկական խաչքարը մեք չտեսանք:

ԳՐԻԳՈՐ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ/ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆՑ

Ապա՝

Протоіерей/Григорій Гаспарович/ Хорасанджіанцъ родился 12 марта 1848 г./ скончался 7 ноября 1910 г.

611. Մահարձան, սպիտակ մարմարից, վրան՝ 5 տող.

ՏԻԳՐԱՆ/ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ/ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆՑ./ԾՆՎ. 1882/, ՄԱՀ. 1901թ.:

612. Մահարձան, սև մարմարից, հարավային կողմին՝ 9 տող.

ԱՒԱՂ ՔԵԶ Ո, ԱՅՐ ԱՐԱՆՑ՝

ԴԱԻԹ ՍԱՐԳՍԵԱՆ ԽԱԼԱՃԵԱՆՑ.

Ի ՔՈՅԴ ՕՐՀԱՍ ԿԱՆԽԱՀԱՍ

ՄԻՆ ՅԸՆՏՐԵԱՑՆ ՊԱԿԱՍԵԱՑ.

ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅԴ ՅԱԻՏԵԱՆ

ՅԱՌԱՔԻՆԵԱՑԴ ՕԹԵԻԱՆ:

ԾՆԱԻ Ի 24 ԴԵԿՏ. 1848 ԱՄԻ.

ՎԱՂՃ. 9 ՅՈՒՆ. 1897:

ՕՏԵՍԱ

613. Հյուսիսային կողմին, դիմաքանդակից վեր՝ ուռսերեն 4 տող.

Давид Сергеевич/ Халайджогло,/ родился 1846 года 24 декабря,/ скончался 1897 года января 9.

Դ. Խալաճյանցի կողքին թաղված է պրոֆեսոր Նտրանդովը, վախճանված 1939թ. մայիսի 30-ին: Մահարձանի հարավային կողմին դրված է.

В.М.Налбандова, сконч. 1923г.

ЗДЕСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ ДВОРЯНИНА/ МИХАИЛА ЛВЕДИСОВИЧА/ ОХАНОВА,/ РОД 27 МАРТА 1845 Г./ СКОНЧ. 27 ЮЛЯ 1909 Г./ МИРЪ ПРАХУ ТВОЕМУ.

ԻԶՄԱՅԻԼ (ԻԱՄԱՅԻԼ)

Դանուր դետի տիրին գտնվող ոչ մեծ այս բերդաքաղաքը այժմ մտնում է Ուկրաինական Հանրապետության Օդեսայի մարզի վարչատարածքային կազմի մեջ: Կաթոլիկության նախանձախնդիր տարածողներից մեկը՝ Ֆրանսիացի Մարիա Լուիզի Պիդուեն²⁵¹, իր աշխատության մեջ նշում է, որ Իզմայիլում ապրող հայերը 1669 թ. ունեին իրենց եկեղեցին²⁵²: Ն. Յորզան ուղղակիորեն հավաստում է եկեղեցու կառուցման թվականը՝ 1693²⁵³:

Եզել է նաև ս. Գեորգ անվամբ փայտաշեն մի տաճար, որը մեզ է հասել²⁵⁴: Իզմայիլցի հայերն ունեին իրենց փողոցը՝ «Վերխնեարմյանսկայա» անունով: Այստեղ դործել է հայաղզի

251 Լուի-Մարի Պիդուեն դը Սեմո Օլոմա, 1638-1717

252 Ա. Լս. Թորամանյան, աշխ. աշխ. էջ 43-44: Հմմտ. Siruni H.D, Armenii în România cu prilejue unui centanar. Bucuresti, 1940, էջ 17

253 Iorga N., Studii asupra si Cetății-Albe, Bucuresti, 1899, էջ 192-194.

254 Ա. Լս. Թորամանյան, էջ 46: